**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 1. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ. հունվարի 29-ի թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 28-ի թիվ 27 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումները և Տեղական Զարգացման Ծրագիրը, և անհրաժեշտ քայլերը՝ այդ Ծրագրով համայնքի առաջնահերթ խնդիրը լուծելու՝ «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի չվերանորգված մասը վերանորոգելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ կողմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԴԱԼԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՀ
"04200366"

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 27 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

*Դալար համայնքի ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «ԴԱԼԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 27 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.՝

1) Որոշման տեքստում «71444» և «71444,0» թվերը փոխարինել «70859,2» թվերով, իսկ «17800» և «17800,0» թվերը «17215,2» թվերով:
2) «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից մուտքեր - 584790,1դրամ» տողում «584790,1» թիվ փոխարինել «0» թվով:
3) «Աղբահանման և սանմաքրման ծրագրի (05.01.01.51) նախատեսվում է 4213 հոդվածով աղբահանության և մաքրման աշխատանքներ 1800,0 հազ. դրամ» նախադասության վերջում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել՝ «4823 հոդվածով 20.0 հազ. դրամ:» բառերը:

4)«Սոց. անապահով անձանց աջակցություն ծրագրի (10.07.01.54.) 4726 հոդվածով նախատեսվում է 1100.0 հազ. դրամի հուղարկավորության նպաստ, 4729 հոդվածով նախատեսվում է 2500,0 հազ.դրամի այլ նպաստ:» նախադասության «2500,0» թիվը փոխարինել «2400,0» թվով և լրացնել «Շրջակա միջավայրի պահպանության ծրագրով (05.04.01.55.) նախատեսվում է /հոդված 4239/ 100.0հազ.դրամի ծախս հակակարկտային կայանի լիցքավորման նպատակով:» նախադասությունը:

5). «Պահուստային ֆոնդի (11.01.02.51.) 4891 հոդվածով նախատեսվում է 2784,0 հազ. դրամի պահուստային միջոցներ:» նախադասության «2784,0» թիվը փոխարինել «2754,0» թվով:

6). «Ֆուտբոլի դաշտի կառուցում հոդված 5112-5500,0հազ. դրամ
հոդված 5134-220,0հազ. դրամ»
տողերում «5500,0.» թիվը փոխարինել «4935,2»թվով, իսկ «220,0»թիվը «200,0» թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ կողմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԱՐԶ ԴԱԼԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ "04-00366"

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 3

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ՝ ԱՅԴ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ՝ «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՉՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՄԱՍԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի/ՀՏԶՀ/ կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումները և Տեղական Զարգացման/ՍՆՏԶ/ Ծրագիրը, հաշվի առնելով համայնքում «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի չվերանորգված մասը վերանորոգելու առաջնահերթ խնդիրը

*Համայնքի ավագանին որոշում է*

1. Ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի չվերանորոգված մասը վերանորոգելու և խաղահրապարակը բարեկարգելու առաջնահերթ խնդրով.

2. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում;

3. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան հայտ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ;

4. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրիավարտիցհետո 15 տարվա ընթացքում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ

3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ կողմ

4. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ

5. ՄԵՔԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ